Նոյեմբերի 5-ին Լոռու մարզի Ալավերդի եւ Վանաձոր քաղաքներ այցելեցին ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, Հանրապետական վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանը: Ալավերդի այցելության նպատակն էր այստեղ նոր ակումբի հիմնումը: Կուսակցության նորաբաց գրասենյակում հավաքված ալավերդցիների հետ զրույցը պրն Միրզախանյանը սկսեց անդրադարձ կատարելով նախ կուսակցության հա-

կաններ են: Երդմնառության արարողությունից հետո ընտրվեց նաեւ «Ալավերդի» ակումբի վարչությունը: Ատենապետ դարձավ Ալավերդու քաղաքապետարանի կրթության եւ մշակույթի բաժնի պետ Արա Թովմասյանը, փոխատենապետ՝ Ծաղկաշատի դպրոցի տնօրեն Վահան Սոխակյանը:

Հաջորդ այցելությունը Վանաձոր էր:

Այստեղ վաղուց արդեն գործում են ՀՌԱԿ մի շարք ակումբներ, կու-

– Դա պայմանավորված է նրանով, որ շնորհիվ նրա վարած քաղաքականության մեր երկիրն այսօր բռնել է զարգացման ազատական ուղի, արդեն իսկ նկատվում է տնտեսության զարգացման միտում: Բացի դրանից, գործող նախագահի վերընտրումը երաշխիք է, որ նախկին իշխանավորները չեն վերադառնա, ինչը, իմ համոզմամբ, մեր երկրի համար կործանարար կլիներ:

– Այժմ դուք խոսում եք նախկին իշխանությունների դեմ, սա-

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՌԱԿ ղեկավարության այցելությունը Լոռու մարզ

ռուս քաղաքական պատմությանը, այնուհետեւ վերլուծեց 1991 թվականից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակահատվածը: Ալավերդցիներին հետաքրքրում էին կուսակցության ատենապետի դիրքորոշումը ներկայիս քաղաքական դաշտում տիրող իրավիճակի, այդ դաշտում ՀՌԱԿ-ի զբաղեցրած դիրքի վերաբերյալ: Սակայն դրանից ավելի մարդկանց հետաքրքրում եւ մտահոգում էր մեր երկրի ապագան, թե կուսակցության ատենապետի կարծիքով ո՞րն է ելքը ստեղծված ծանր իրավիճակից:

«Երկրի քաղաքական դաշտում լուրջ դեր ունեցող ուժերը պետք է ձեւավորված լինեն հստակ գաղափարախոսության շուրջ: Ցավոք, մեր իրականության մեջ դրությունն այլ է. ուղղակիորեն որեւէ անձով պայմանավորված, ընտրություններից առաջ ստեղծված քաղաքական կառույցներն են որոշում երկրի ապագան, սակայն, իմ համոզմամբ, այդպիսի քաղաքական կառույցներն ապագա չունեն»: Ռուբեն

սակցության ղեկավարության այցելության օրը ՀՌԱԿ շարքերն անցան նոր անդամներ: Վանաձորցիների հետ սկսված զրույցն այնուհետեւ շարունակվեց ուղիղ եթերի միջոցով: Ռուբեն Միրզախանյանը Լոռու մարզային հեռուստատեսության

կայն ժամանակին լավ հարաբերություններ ունեիք նրանց հետ եւ 96-ի նախագահական ընտրություններին պաշտպանեցիք Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը:

– Չեմ կարծում, թե լավ հարաբե-

ՀԱԿԻՐՃ

Ավարտական հանդիսություն Հայաստանի ամերիկյան համալսարանում

Արդեն 10 տարի Հայաստանի ամերիկյան համալսարանը պատրաստում է մասնագետներ տնտեսության, քաղաքագիտության, ճարտարագիտության, առողջապահության, իրավագիտության եւ այլ ոլորտներում աշխատելու՝ ի նպաստ Հայաստանի «տնտեսության նորացման եւ կյանքի զարգացման»:

ՀԱՀ-ի այս տարվա ավարտական հանդիսությունն անցավ շուքով եւ խանդավառությամբ: Սա իսկապես տոնակատարություն էր՝ կազմակերպված խնամքով եւ ամենայն նախանձախնդրությամբ, որ հավաստիացումն էր ՀԱՀ-ի շնորհած վկայագրերի եւ կոչումների, եւ ընդհանրապես համալսարանական կրթության նկատմամբ սեփական հարգանքի եւ կարեւորության:

Արարողությանը մասնակից էին 7 ծրագրերի՝ 2001 թ. 103 շրջանավարտներ՝ ավարտական զգեստներով, համալսարանի նախագահը, փոխնախագահը, ֆոլեջների ղեկավարները, դասախոսական կազմը: Հայաստանի եւ ԱՄՆ-ի օրհներգերից հետո Մայր աթոռ Ս. Էջմիածնից ներկաներին բարեմաղթանքի եւ օրհնանքի խոսք հղեց Տեր Նավասարդ եպս. Կճոյանը: Արարողությունն անցկացրեց եւ համալսարանի գործունեությանն անդրադարձավ ՀԱՀ-ի նախագահ Հարություն Արմենյանը: Ողջույնի խոսք հնչեց Կալիֆոռնիայի համալսարանից (տեսաֆիլմ): Ելույթ ունեցավ ՀՀ ԿԳ նախարար Էդուարդ Ղազարյանը, ավարտական հանդեսի ուղերձներով հանդես եկան շրջանավարտներ Քրիստինա Բայբուրթյանը, Միհրան Սահակյանը:

Համալսարանի տասնամյակի առիթով մեդալներով պարգեւատրվեցին դոկտ. Ծովակ Ավագյանը, պրոֆ. Էդուարդ Ավետիսյանը, դոկտ. Ֆուլլերը եւ պրոֆ. Յուրի Սարգսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին համալսարանի դերը Հայաստանի կրթական համակարգում եւ կրթության միջազգային ինտեգրացման հարցում: «Մենք արտասահմանյան կրթությունը բերեցինք Հայաստան, որ դուք չգնաք այստեղից», ասաց ճարտարագիտության համալսարանի դեկան Յուրի Սարգսյանը: Ներկաները նկատելի ջերմությամբ ընդունեցին ՀԱՀ-ի փոխնախագահ դոկտ. Ֆուլլերի բանաստեղծական եւ անչափ պատկերավոր ելույթը. «Աշխարհի գանձերից մեկը երիտասարդությունն է: Երբ երեխաները խաղում են, գույները չեն նկատում: Նրանց սովորեցնել է պետք: Նրանց մեջ մեծ սեր կա միմյանց նկատմամբ, բայց տարիներ հետո փոխվում է անտարբերության: Ինչո՞ւ է այդպես պատահում...

... Այն, ինչ վերցնում ես՝ քեզ տալիս է կենսամակարդակ, ինչ դու ես տալիս՝ քեզ տալիս է կյանք:

Շարունակեք փնտրել ճշմարտությունը»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Կրծքագեղձի քաղցկեղը զգաստություն է պահանջում

Մեր հանրապետությունում բարձր է կրծքագեղձի քաղցկեղով տառապող կանանց թիվը: Ուսումնասիրված կանանց շուրջ 10 տոկոսի մոտ հայտնաբերվում է չարորակ գոյացություն: Նկատի ունենալով այս վիճակագրությունը՝ Կանանց առողջության պահպանման

անց են կացնում «Զգաստություն՝ կրծքագեղձի քաղցկեղի նկատմամբ» շարժումը եւ նպատակ ունեն կանանց ուշադրությունը հրավիրել կրծքագեղձի հիվանդությունների եւ հատկապես քաղցկեղի վտանգների վրա: Բոլոր հետազոտությունները սեպտեմբերի 20-ից մինչեւ հոկտեմբերի 21-ը